ԱԼԻՔ
Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ
92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 11 (24564), հատավաճառ՝ 20000 ռիալ
سال نودودوم - شماره (٢٤٥٦٤) ١١ - تکشماره ٢٠٠٠٠ ریال - ٨ صفحه
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
15 ՅՈՒՆՈՒԱՐԻ 2024
آلیک
دوشنبه – ۲۵ دی ۱۴۰۲
روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی
E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir



«Միջանցք» կորզելու՝ ադրբեջանա-թուրքական հնարաւոր փորձի մասին.

Վարդան Ոսկանեան.

# «ԻՐԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՇԱՏ ԿՈՇՏ՝ ԸՆԴՀՈՒՊ ՄԻՆՉԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ»

Նախորդ տարուայ վերջին, երբ Ադրբեջանն ու Թուրքիան ակտիւօրէն խօսում էին, այսպէս կոչուած, «Զանգեզուրի միջանցք»-ի մասին, Հայաստան այցելեց Իրանի Իսլամական Հանրապետութեան արտգործնախարար Հուսէյն Ամիր Աբդոլլահեանը։

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ Իրանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը մի քանի յստակ մեսիջներ էր յղել աշխարհին, այդ թւում՝ տարածաշրջանի դերակատարներին։

Նա յստակ ասել էր, որ Իրանն աջակցում է ՀՀ տարածքային ամբողջականութեանը, աջակցում են «Հիւսիս-հարաւ» տարանցիկ ուղու կառուցմանը, ինչպէս նաեւ ողջունում են Հայաստանի ներկայացրած «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը։ Նա նաեւ յաւելել էր, որ «Իրանը ցանկանում է, որպէսզի տարածաշրջանում խաղաղութիւնն ու կայունութիւնն ապահովի՝ առանց արտաքին ուժերի միջամտութեան»։

Թուրքիայի ու Ադրբեջանի յայտարարութիւնների ու Հայաստանի տարածքների նկատմամբ նկրտումների ֆոնին պատահակա՞ն էր ՀՀ Իրանի ԱԳ նախարարի այցն ու նրա յայտարարութիւնները։

168.am-ի հետ զրոյցում ԵՊՀ Իրանագիտութեան ամբիոնի վարիչ, իրանագէտ Վարդան Ոսկանեանը խօսելով այս հարցի ու յարակից մի քանի հարցերի շուրջ, ասաց, որ ակնյայտ է, որ Իրանի ԱԳ նախարարի այցը տեղի էր ունենում տարածաշրջանային զարգացումների ֆոնին, եւ դրանցում առաջնային օրակարգը, բնականաբար, եղել է անվտանգայինը։

«Անշուշտ, սուղ հաղորդագրութիւններում կամ մամուլի համար հնչեցւած յայտարարութիւններում մանրամասներ շատ չեն եղել, բայց որեւէ պայծառատեսութիւն պէտք չէ՝ հասկանալու համար, որ իրանական կողմը խիստ շահագրգիռ է մեր տարածաշրջանում իր շահերն առաջ մղելու հարցում։ Այդ շահերը շատ հարցերում համընկնում են Հայաստանի շահերի հետ։ Մասնաւորապէս՝ առաջին հերթին դա վերաբերում է թուրք-ադրբեջանական ծաւալապաշտական նկրտումներին՝ արդէն ՀՀ տարածքային ամբողջականութեան նկատմամբ։

Արցախը բռնազաւթելուց յետոյ այդ տանդեմը կենտրոնացել է հէնց Հայաստանի, մասնաւորապէս՝ Սիւնիքի մարզի վրայ, իսկ հայ-իրանական սահմանը, որն անցնում է Սիւնիքով՝ հայկական կողմից, եւ Ատրպատականով՝ իրանական կողմից, Իրանի համար կենսական նշանակութիւն ունի։ Գրեթէ նոյն նշանակութիւնն ունի, ինչ Հայաստանի համար, հաշւի առնելով, որ դէպի հիւսիս-արեւմուտք իրանական ելքի հայկականին համարժէք միակ այլընտրանքը արդէն իսկ միանական դարձած թուրք-ադրբեջանական աշխարհաքաղաքական տարածքն է։ Ուստի Հայաստանն Իրանի համար այս հարցում փաստացի միակ այլընտրանքն է»,- նշեց Վարդան Ոսկանեանը։

Նրա խօսքով՝ բացի այս, կայ նաեւ Իրանի հոգեւոր առաջնորդի յստակ յայտարարութիւնն առ այն, որ Հայաստան-Իրան հազարամեակների սահմանը որեւէ պարագայում չի կարող խախտւել, վտանգւել կամ կտրւել։ Այս յայտարարութիւնն արւել է Թուրքիայի նախագահի հետ անմիջական հանդիպման ընթացքում՝ երես առ երես հանդիպման ժամանակ։ Հետեւաբար՝ այս համատեքստում Իրանի արտգործնախարարը, որպէս առաջնահերթ կարեւորութիւն եւ Իրանի

(Շար. 2-րդ էջում)

# Արամ Ա կաթողիկոսը 2024-ը հռչակել է «Մարդուժի պատրաստութեան տարի»



«ԱԼԻՔ» - Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը 2024-ը հռչակել է «Մարդուժի պատրաստութեան տարի»։ Այս մասին յայտնում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի մամլոյ ծառայութիւնից։

«Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը 2003 թուականէն սկսեալ իւրաքանչիւր տարին կը ձօնէ մեր համահայկական կեանքին հետ անմիջական աղերս ունեցող երեւոյթի մը, դէպքի մը, դէմքի մը կամ յոբելեանի մը։ 2024 տարին Նորին Սրբութիւնը Հայրապետական յատուկ գիրով հռչակեց ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ։ Իւրաքանչիւր տարուան Հայրապետական Հռչակագիրը յատուկ հանդիսաւորութեամբ կ'ընթերցուի մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակներուն ուշադրութիւնը կեդրոնանալու հրաւիրուի տուեալ թեմային, եւ Վեհափառ Հայրապետին թելադրութիւններով ու ցուցմունքներով վառենք մեր եկեղեցական ու ազգային վարչակազմակերպչական կեանքը։

Արդարեւ, կիրակի, 14 յունուարի 2024-ին, նախագահութեամբ Արամ Ա կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցւեցաւ սուրբ եւ անմահ պատարագ, որուն ընթացքին կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն Տ. Շահան արք. Սարգսեան հաւատացեալներուն ընթերցեց Նորին Ս. Օծութեան «Մարդուժի Պատրաստութեան» տարուան նուիրուած Հայրապետական յատուկ հռչակագիրը։

«Հայրական սիրով, Հայրապետական օրհնութեամբ եւ ազգային վառ ապրումներով» ողջունելէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդները, հոգեւոր դասը, ազգային իշխանութիւնները եւ մեր ժողովուրդի զաւակները, Վեհափառ Հայրապետը անոնց ուշադրութեան յանձնած է, թէ «բոլոր կրօնները ու քաղաքակրթութիւնները յատուկ ուշադրութեան արժանացուցած են մարդը, որպէս մտածող, գործող, կառավարող եւ իր ստեղծագործ ոգիով հասարակական կեանքը զարգացնող եւ անոր իմաստ ու ուղղութիւն տուող իրականութիւն»։ Այս մտածումէն ելլելով՝ Հայրապետը հարց տուած է, թէ «ինչո՞ւ մարդուժի պակաս կայ Սփիւռքի կեանքէն ներս. ի՞նչ են ատոր պատճառները»․ եւ ապա պարզած է հայ կեանքի այսօրուան պատկերը.- ա) մեր ունեցած ներկայ մարդուժը ընդհանրապէս չի համապատասխաներ ներկայ ժամանակներու կարիքներուն ու պահանջներուն, եւ բ) մեր մարդուժին կարեւոր մէկ մասը փաստօրէն կա՛մ հայ կեանքի լուսանցքին վրայ կը գտնուի, կա՛մ հեռու է հայ կեանքէն։ «Այս մտահոգիչ երեւոյթին դիմաց, չենք ուզեր այպանել




(Շար. 8-րդ էջում)

Sputnik-ի էջից հեռացւած հայերէն գրառման համաձայն.

# ««Խաղաղութեան խաչմերուկ» նախագծի տնտեսական օգուտները Հայաստանում դեռ հաշւարկւած չեն»

«ԱԼԻՔ» - Հայաստանում դեռ չեն հասցրել հաշւարկել, թէ ինչ տնտեսական օգուտ կարող է բերել «Խաղաղութեան խաչմերուկ» նախագծի իրականացումը։ Նաեւ տեղեկութիւններ չկան, թէ երթուղիներից որն է գործարկւելու սկզբնական փուլում։ Այս մասին է գրել «Sputnik Արմենիա»-ն իր հայերէն լուրերի էջում, ինչն աւելի ուշ հեռացւել է էջից։ Ենթադրութիւններ անելուց խուսափելու համար միայն նշենք, որ հաւանաբար այն նոր տուեալներով թարմացնելու եւ ուսումնասիրութիւնները ամբողջացնելու համար է այդպէս արւել։




Այնուամենայնիւ սա չէր կարող աննկատ մնալ ոլորտի փորձագէտների աչքից։ Կովկասի հարցերով փորձագիտական շրջանակներն անդրադառնալով հրապարակմանը նշել են, որ պաշտօնական լրահոսի համար եւս դեռ պարզ չէ, թէ արդեօք Հայաստանի իշխանութիւնները երազած հեռանկարներով են բանակցութիւնների գնում, թէ իրապէս լուրջ ծրագիր ունեն։

Նախագծի մասին «Sputnik Արմենիա»-ի գրաւոր հարցին ի պատասխան, ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցւածքների նախարարութիւնից յայտնել են. «Այս փուլում աշխատանքներ են տարւում տեխնիկա-տնտեսական ուսումնասիրութիւններ կատարելու ուղղութեամբ։ Տեխնիկական եւ տնտեսական ուսումնասիրութեան

(Շար. 2-րդ էջում)



Ի՞նչ է ամբոխը - մեծ յիմարն է նա,
ոգին հալածող եւ տարրը չարի
բռնութեան խարիսխ, եւ սուր երկսայրի,
եւ զայրոյթի մէջ՝ զազան վիթխարի։

Ի՞նչ է համայնքը - թշնամու բանակ
եւ անյայտն այնտեղ անշղթայ գերի,
երբ է հանդուրժել հոգու թռիչքին
եւ սլացումին վսեմ մտքերի։

Նողկալի համայնք, հեղձուցիչ օղակ,
քո լաւն ու վատը - ահեղ խարազան,
Մի անհուն մկրատ բոլորին խուզող
միահաւասար եւ միանման։

Աւետիք Իսահակեան (1875-1957) հայ մեծանուն բանաստեղծ, արձակագիր եւ թարգմանիչ
Մէջբերումը՝ նրա «Աբու Լալայ Մահարի» պոէմից

ARAM® coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# Բունդեսվէրը պատրաստւում է ՆԱՏՕ-ի վրայ ռուսական յարձակմանը



Բունդեսվէրը պատրաստւում է Ռուսաստանի դէմ զինուած հակամարտութեան: Գրում է գերմանական Bild հրատարակութիւնը:

Նշւում է, որ նմանատիպ եզրակացութիւն է բխում գաղտնի փաստաթղթից:

Պարբերականի կողմից նշուած փաստաթղթերում տեղ գտած տեղեկութիւնների համաձայն՝ ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի միջեւ յարաբերութիւնների հնարաւոր սրումը կարող է տեղի ունենալ այս տարուայ փետրուարին:

Սա ուսուցման սցենար է, որը նկարագրում է քայլ առ քայլ, ամիս առ ամիս, թէ ինչպէս կը գործի Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ ինչպէս պէտք է պաշտպանի ՆԱՏՕ-ն:

Բունդեսվէրի այս սցենարում էսկալացիան կը սկսի ընդամէնը մի քանի շաբաթից: Դրանից անմիջապէս յետոյ տասնեակ հազարաւոր գերմանացի զինուորներ պէտք է ուղարկուեն մարտի:

# Առանց Ռուսաստանի խօսքի խաղաղութիւն չի լինի

Դաւոսում ուկրաինական խաղաղութեան բանաձեւի շուրջ չորրորդ բանակցութիւնների ժամանակ Շուէյցարիայի արտաքին գործերի նախարար Իգնացիօ Կասիսը յայտարարել է, որ ուկրաինական խաղաղութեան ծրագիրն ընդամէնը «հիմք» է Ռուսաստանի հետ հակամարտութեան դադարեցմանն ուղղուած բանակցութիւնների համար,- հաղորդում է Swissinfo-ն:

«Այսպէս թէ այնպէս, Ռուսաստանը պէտք է ներառուի», - ասել է Կասիսը՝ յաւելելով՝ «Առանց Ռուսաստանի խօսքի խաղաղութիւն չի լինի»:

Միաժամանակ, նրա կարծիքով, խաղաղութեան ծրագիրը պէտք է առաջ տարուի, նոյնիսկ եթէ Կիեւի եւ Մոսկուայի միջեւ երկխօսութիւն դեռ չի կարող լինել, քանի որ ռազմական իրավիճակը խանգարում է դրան:

«Ամէն օր, մինչ մենք սպասում ենք, տասնեակ խաղաղ բնակիչներ են զոհւում: Մենք իրաւունք չունենք սպասելու: Մենք պէտք է պատրաստ լինենք, երբ պայմանները թոյլ տան»,- ասել է Կասիսը:

Ուկրաինան նոյնպէս կը ցանկանար խաղաղութեան համաշխարհային գագաթնաժողովը տեսնել աւելի



բարձր մակարդակով, նշել է նա:

«Մենք այս հարցի վերանայման գործընթացում ենք, եւ Զելենսկու հետ քննարկումները տեղի կունենան առաջիկայ մի քանի օրուայ ընթացքում»,- յաւելել է Կասիսը:

Tert.am

## ««Խաղաղութեան....

(Շար. 1-ին էջից)

արդիւնքներն ամփոփելուց յետոյ հնարաւոր կը լինի գնահատական տալ տնտեսական օգուտների մասին»:

Նախկին ԽՍՀՄ Մերձաւոր Արեւելքի հարեւանութեամբ գտնուող նորանկախ պետութիւնների Կովկասի հարցով փորձագէտ եւ «Ալամէ Թաբաթաբայի» համալսարանի դասախօս դոկտ. Էհսան Մովահեդեանն իր տելեգրամային ալիքում տեղադրելով Sputnik-ի հրապարակման պարսկերէն թարգմանութիւնը գրել է, որ ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցւածքների նախարարութիւնը միաժամանակ պնդել է, որ նախաձեռնութիւնը նոր կապերի ու յարաբերութիւնների առիթ է տարածաշրջանի բոլոր երկրների միջեւ: «Նախագծի իրականացման արդիւնքում կը ձեւաւորի միջազգային առեւտրի, տարանցիկ բեռնափոխադրումների, միջազգային չափանիշերին համապատասխան անվտանգ ճանապարհային կառոյցների հնարաւորութիւն, ինչը ենթադրում է տրանսպորտային ծախսերի կրճատում»,- նշուած է նախարարութեան պատասխանի մէջ, որի մասին մեկնաբանութիւնները թողնում ենք ընթերցողին:

Փորձագէտը նշել է նաեւ, որ նախարարութիւնը յիշեցնելով, որ ծրագրի շրջանակներում Հայաստանը պատրաստ է վերակառուցել 4 երկաթուղային ենթակառուցւածքային հատուածներ՝ շուրջ 130 կիլոմետր ընդհանուր երկարութեամբ, յաւելել է, որ աղբիւրի համաձայն՝ նախարարութիւնում նշել են, որ ծրագրի շրջանակներում ճանապարհի ու երկաթուղու շինարարութեան վերջնական արժէքի վերաբերեալ տեղեկատուութիւն չունեն:

Մեր կողմից նշենք, որ նման երազանքներով բանակցային գործընթացների վարոյթը՝ հայկական կողմին, հէնց տալու է այն, ինչի ականատեսն ենք եղել 44-օրեայ պատերազմից ցայսօր:

Վերադառնալով նախարարութեան գրաւոր պատասխանին, փորձագէտը դրանք հրապարակել է առանց յաւելումների կամ մեկնաբանութիւնների՝ հետեւեալ կէտերով.

«Նռնաձոր-Ագարակ (43 կմ.), Հրազդանից Կապան երկաթուղու աւերուած հատուածներ (80 կմ.), Երասխից՝ Նախիջեւանի սահման (1 կմ.), Գիւմրիից՝ Թուրքիայի սահման երկաթուղու (6 կմ.) աւերուած հատուածներ:

«Խաղաղութեան խաչմերուկ»-ի ենթակառուցւածքային բաղադրիչը ներառում է նաեւ հետեւեալ կէտերը.

• «Հիւսիս-Հարաւ» ճանապարհային ենթակառուցւածքը, որի երկարութիւնը կառուցումից յետոյ կը կազմի շուրջ 461 կմ.

• Կապան-Արմաւիր՝ 210 կմ. երկարութեամբ արագընթաց ճանապարհահատուած (M4 եւ M5 միջպետական).

• Կապան-Ախուրիկ՝ շուրջ 170 կմ. երկարութեամբ երկկողմանի ճանապարհահատուած(միջպետականճանապարհներ M4, MTS, M6, M3, M7).

• Գորիս-Անգեղակոթ 84 կմ. երկարութեամբ ճանապարհի (M2, M13 միջպետական ճանապարհներ).

• Սոթք-Երասխ՝ շուրջ 271 կմ. երկարութեամբ երկկողմանի ճանապարհի (միջպետական M2, M4, M10 եւ M11 ճանապարհներ):

Միաժամանակ Հայաստանը պատրաստւում է 7 ցամաքային անցակէտ կառուցել Ադրբեջանի (Կապան, Սոթք, Քարահունջ, Երասխ, Անգեղակոթ) եւ Թուրքիայի հետ (Ախուրիկ, Մարգարա) սահմանին, ինչպէս նաեւ 5 երկաթուղային անցակէտ՝ Ադրբեջանի սահմանին (Նռնաձոր, Ագարակ, Երասխ, Կապան) եւ Թուրքիայի հետ սահմանին:

Ինչպէս նշել էինք, գրաւոր պատասխանում նշուած է, որ ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների վերջնական արժէքի վերաբերեալ հաշւարկուած տուեալներ առայժմ չկան: «Ներկայումս կան միայն նախնական գնահատականներ»,- նշուած է պատասխանում:

Ենթադրւում է, որ պատասխանի վերաբերեալ արձագանգների պակասը չի զգացւելու, յատկապէս, որ բանակցային գործընթացում ուժի դիրքերից հանդէս եկող Բաքւի համար շարունակում է ուժի մէջ մնալ Ալիեւի երազած «միջանցքի» հնարաւորութիւնը:

Չնայած կողմերն այնքան էլ սխալ չեն, երբ երազանքների մասին պահանջներով են բանակցային գործընթաց վարում: Մերձաւոր Արեւելքում եւ առհասարակ տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխութիւնների նպատակով շարունակւող քաշքշուկների ամենաթէժ պահին նման խաղաղութեան մասին միայն երազել կարելի է:

## «ԻՐԱՆԻ....

(Շար. 1-ին էջից)

հոգեւոր առաջնորդի ցուցում, այդ խնդիրն է առաջ մղում:

Ըստ Վարդան Ոսկանեանի՝ այս ամէնը հաշւի առնելով, ակնյայտ է, որ իրանական կողմը, ինչպէս ասում են, կատակ չի անում եւ լուրջ ու վճռական տրամադրուածութիւն ունի առ այն, որ եթէ յանկարծ փորձ կատարւի որեւէ ճանապարհով այդ «միջանցքը» կորզել, իրանական կողմի արձագանգը կարող է լինել շատ կոշտ՝ ընդհուպ մինչեւ ռազմական միջամտութիւնը:

«Այս համատեքստում է տեղաւորւում նաեւ ՀՀ-ում Իրանի դեսպանի վերջին յայտարարութիւնը, որ Ադրբեջանը չի փորձի «միջանցք» ստանալու համար դիմել ռազմական գործողութիւնների: Շատ պարզ է, որ Իրանը, լինելով Հայաստանի բարեկամը եւ հազարամեակների հարեւան պետութիւնը, գիտակցում է հայ-իրանական սահմանի կարեւորութիւնը եւ իր ունեցած ողջ գործիքակազմով աշխատելու է այդ ուղղութեամբ, նաեւ Հայաստան-Իրան յարաբերութիւնների համատեքստում, կարծում եմ, իր դիրքորոշումները շատ յստակ ներկայացնում է հայկական կողմին»,- շեշտեց մեր զրուցակիցը:

Իրանի արտգործնախարարի Հայաստան այցի յաջորդ կարեւորագոյն առանձնայատկութիւնը, իրանագէտի բնորոշմամբ՝ Իրանի շահագրգիռ մօտեցումն է, որպէսզի Հայաստանը հնարաւորինս արագ հիւպատոսութիւն բացի Թաւրիզում, որն Ատրպատականի սիրտն է, իրանական հնագոյն քաղաքներից մէկը:

Հայ-իրանական յարաբերութիւնների համատեքստում շատ կարեւոր է, որպէսզի Հայաստանն ունենայ այնտեղ հիւպատոսութիւն: Ընդորում, սա արւում է մէկ այլ համատեքստում, քանի որ Բաքւի բարբարոսական վարչախումբը չափազանց դժգոհ է, որ իրեն թոյլ չեն տալիս Թաւրիզում բացել, այսպէս կոչւած, մշակութային կենտրոն, որն իրականում լինելու է լրտեսական որջ: Բայց հայկական կողմին Իրանը նոյնիսկ շահագրգռում է, որպէսզի հնարաւորինս արագ հիւպատոսութիւն բացի:

Իրանագէտը պնդում է, որ հիւպատոսարանի բացումը պէտք է տեղի ունենայ հնարաւորինս արագ ու որակեալ, որովհետեւ առնչւում է հայ-իրանական յարաբերութիւններին առնչւող կենսական մի շարք խնդիրների:

Խօսելով տարածաշրջանում հնարաւոր զարգացումների ու խնդիրների մասին, Վարդան Ոսկանեանն ասաց՝ ակնյայտ է, որ հայ-իրանական յարաբերութիւնների համատեքստը որքան հնարաւոր է արագ եւ որակեալ պէտք է բերւի ռազմավարական գործակցութեան մակարդակի՝ հաշւի առնելով մերձաւորարեւելեան գործընթացները:

«Իրանն անուղղակիօրէն ներգրաւուած է մերձաւորարեւելեան մի շարք հարցերում, խօսքը վերաբերում է թէ՛ Եմէնին, թէ՛ իսրայէլա-պաղեստինեան հակամարտութեանը, թէ՛ Սիրիայում, Իրաքում ու Աֆղանստանում ընթացող գործընթացներին: Այս առումով ցանկացած զօնում որեւէ լարւածութիւն, բնականաբար, Իրանից պահանջում է լրացուցիչ ռեսուրսների ուղղորդում:

Օրինակ, Եմէնի հութիռակոծումն Իրանից պահանջելու է լրացուցիչ ռեսուրսների ներդրում այս ուղղութեամբ, ինչից Բաքւի բարբարոսական վարչախումբը կարող է որոշակիօրէն ակտիւանալ ու համարել, որ հասունացել է պահն իր ծաւալապաշտական նկրտումները կեանքի կոչելու համար: Նման սցենարներից խուսափելու համար անհրաժեշտ է, որ հայ-իրանական յարաբերութիւնները բերւեն դաշնակցային մակարդակի, դա ամրագրւի ռազմավարական համագործակցութեան մակարդակում: Բնականաբար, դրա հիմնական մեխը պէտք է դառնայ անվտանգութեան խնդիրը»,- նշեց Վարդան Ոսկանեանը:

Իրանագէտը վստահեցնում է՝ անվտանգութեան համատեքստում չափազանց կարեւոր է, որպէսզի Հայաստանը սկսի լրջօրէն զբաղուել հնդկական Հիւսիս-Հարաւ ծրագրի հայաստանեան բացւածքով՝ խօսքը ենթակառուցւածքների մասին է, եւ իրանական Պարսից ծոց-Սեւ ծով տրանսպորտային հանգոյցի խնդիրներով: Քանի որ նոյն Եմէնում ընթացող գործընթացները, յատկապէս՝ կապւած Կարմիր ծով նաւագնացութեան ըստ էութեան դժւարացման հետ, շատ կարեւոր է, որպէսզի Հայաստանը Հիւսիս-Հարաւ առանցքում գտնի իր տեղը: Սա կարեւոր ու ձեռնտու է ոչ միայն տնտեսական առումով, այլեւ վերը նշած անվտանգային խնդիրները հաշւի առնելու համատեքստում:

«Այս պարագայում Հայաստանը տարածաշրջանում կը դառնայ է՛լ աւելի ծանրակշիռ դերակատարութիւն ստանձնած գործօն: Ըստ էութեան կը տապալի Բաքւի բռնապետի կողմից առաջ մղւող՝ Հայաստանի մեկուսացման յստակ ծրագիրը, որի ապացոյցն էին այդ բարբարոսի վերջին յայտարարութիւններն իր՝ Ամանորին յաջորդած հարցազրոյցում:

Կարծում եմ՝ Հայաստանն իր տեղն ընդհանուր աշխարհաքաղաքական համատեքստում պէտք է տեսնի Հիւսիս-Հարաւ առանցքում իր բոլոր բաղադրիչներով՝ սկսած հաղորդակցութեան ուղիներից, վերջացրած անվրտանգութեան խնդիրներով: Այստեղ Հայաստանը կարող է դառնալ նաեւ չափազանց կարեւոր հարթակ Իրան-Ռուսաստան համագործակցութեան համար, որովհետեւ Ամանորից առաջ Իրանը փաստացիօրէն էլ աւելի խորն է ինտեգրւել առեւտրատնտեսական յարաբերութիւնների առումով ԵԱՏՄ-ում: Հայաստանն այն միակ պետութիւնն է, որը ցամաքային սահման ունի Իրանի հետ՝ ԵԱՏՄ համագործակցութեան շրջանակներում: Բոլոր աշխատանքները պէտք է առաջ մղւեն մէկ տեսլականով՝ առաջ մղել ՀՀ անվտանգութիւնը, Հայաստանը դարձնելով պետութիւն-ամրոց՝ թշնամական բոլոր նկրտումներին դիմագրաւելու համար: Պատրանքներ պէտք չէ տածել, քանի որ թուրք-ադրբեջանական տանդեմի նպատակն է հասնել Հայաստանի չգոյութեանը, այն վերածել ռեզերւացիայի»,- եզրափակեց Վարդան Ոսկանեանը:



# Հայաստան-Իրան առեւտրաշրջանառութեան ծաւալների կտրուկ աճ եւ երկկողմանի յարաբերութիւնների զարգացում

***Իրանի պետական լրատուական գործակալութիւնում The Islamic Republic News Agency (IRNA) պարսկերէնով լոյս է տեսել տնտեսագէտ Սուրէն Պարսեանի յօդւածը՝ «Հայաստան-Իրան առեւտրաշրջանառութեան ծաւալների կտրուկ աճ եւ երկկողմանի յարաբերութիւնների զարգացում» թեմայով:***
***Ստորեւ ներկայացնում ենք յօդւածի հայերէն տարբերակը.***




*Հայաստանը եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը ունեն հազարամեակներ դիւանագիտական, քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւններ եւ անխախտելի սահման, որը հանդիսացել է տարածաշրջանի կայունութեան եւ բարգաւաճման կարեւոր գործօններից մէկը: Անշուշտ, երկու երկրների փոխշահաւէտ յարաբերութիւնները եւ նախագծերը մշտապէս բարելաւման կարիք ունեն, եւ դրանցից մէկի մասին յայտարարուեց 2023 թւականի դեկտեմբերի 27-ին, Երեւանում, մամուլի ասուլիսի ժամանակ. ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյեան եւ Իրանի արտաքին գործերի նախարար Հոսէյն Ամիր Աբդոլլահեանը յայտարարեցին Թաւրիզում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութիւն բացելու մասին:*

*Հէնց Թաւրիզում հայկական հիւպատոսութեան բացման հնարաւորութիւնը եւս մէկ անգամ փաստում է, որ իրանական իշխանութիւնները հակւած են բազմավեկտոր եւ երկարաժամկէտ արտաքին եւ ներքին քաղաքականութիւն վարել:*

*Թաւրիզում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն հիմնադրելով, Արեւելեան Ատրպատականից բացի, հնարաւոր կը լինի հիւպատոսական սպասարկման տարածքը ընդլայնել ՀՀ յարակից այլ շրջանների, այդ թւում՝ ԻԻՀ Արեւմտեան Ատրպատական, Արդեբիլ, Գիլան ու Մազանդարան նահանգներ, ինչը կը նպաստի այս տարածաշրջանների միջեւ տնտեսական, մշակութային եւ կրթական կապերի զարգացմանը եւ ամրապնդմանը: Ներկայումս հիւպատոսական սպասարկման այդպիսի լայն տարածքում գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն ունեն երկու հիւպատոսութիւններ՝ Թուրքիայի ու Ադրբեջանի գլխաւոր հիւպատոսութիւնները:*




*Հարկ է յիշեցնել, որ 1920 թւականին Խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ Հայաստանը նոյնպէս հիւպատոսութիւն է ունեցել Թաւրիզում, սակայն Խորհրդային միութեան կազմաւորումից յետոյ այն լուծարւել է:*

*Հետեւաբար, հիւպատոսութեան բացումը կարելի է դիտարկել նաեւ երկու եղբայրական ժողովուրդների միջեւ պատմական եւ աւանդական կապերի վերականգնման ուղղւած կարեւոր քայլ:*

*Թաւրիզում հայկական հիւպատոսութեան բացումը պէտք է դիտարկել Կապանում (Սիւնիք, Հայաստան) Իրանի Իսլամական Հանրապետութեան հիւպատոսութեան բացելու (2022թ.) հայելանման պատասխանը: Հայկական եւ իրանական հիւպատոսութիւնների բացումը առաջին հերթին քաղաքական եւ անվտանգային բաղադրիչ ունի եւ ուղղւած է հիւսիս-հարաւ միջանցքի ապահովմանը: Անշուշտ այն կարող է զսպել թուրք-ադրբեջանական այսպէս կոչւած «Զանգեզուրի միջանցք»-ի բացումը: Հայաստանի Հանրապետութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը եւ ինքնիշխանութիւնը կարմիր գիծ են. այլ երկրների ապակառուցողական եւ ագրեսիւ պահւածքը եւ քարոզչութիւնը, որն ուղղւած է Հայաստանի եւ Իրանի դէմ, պէտք է կասեցնել բոլոր հնարաւոր միջոցներով, այդ թւում՝ դիւանագիտական: Եւ առհասարակ Հայաստանի տարածքով միջանցք ցանկացող երկրները, արդեօք պատրա՞ստ են իրենց երկրի տարածքով նման միջանցքներ տալ այլ երկրներին, կարծում եմ, որ ոչ:*

*Թաւրիզում եւ Կապանում գործող հիւպատոսութիւնները կարող են ուղղակի կամ անուղղակի եղանակով նպաստել Հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցքի կառուցման աշխատանքներին, մասնաւորապէս՝ 2023 թւականի հոկտեմբերի 23-ին Հայաստանի կառավարութեան եւ իրանական 3 ընկերութիւնների միջեւ ստորագրւել է նոր պայմանագիր, ըստ որի՝ իրանական կողմը կառուցելու է Ագարակ (Իրանի սահմանից)-Վարդանիձոր-Քաջարանի թունել ճանապարհահատւածը՝ 32 կմ. (Սիւնիք, Հայաստան): Հայաստանի այս տարածաշրջանում իրանական շինարարական ընկերութիւնների գործունէութիւնը ոչ միայն տնտեսական, այլ նաեւ անվտանգային եւ քաղաքական նշանակութիւն ունի: Յիշեցնեմ, որ թուրք-ադրբեջանական ծրագրի համաձայն՝ հէնց Ագարակով (Մեղրիով) էի նախատեսում անցակցնել այսպէս կոչւած «միջանցք»-ը: Ճանապարհահատւածի կառուցման աշխատանքներում իրանական շինարարական ընկերութիւնները կարող են ներգրաւել Թաւրիզից, սահմանակից այլ շրջաններից աշխատուժ, տեխնիկա, սարքաւորումներ եւ շինանիւթեր, ինչը կը խթանի տնտեսական ակտիւութիւնը այս տարածաշրջանում:*

*Միանշանակ է նաեւ, որ Թաւրիզում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան բացումը կարող է նոր խթան հանդիսանալ երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւնների զարգացման համար: Հարկ է նշել, որ վերջին տարիների ընթացքում կտրուկ աւելացել է Հայաստանի եւ Իրանի միջեւ առեւտրաշրջանառութիւնը, մասնաւորապէս՝ 2022 թւականին Իրանից Հայաստան է ներկրւել շուրջ 526 մլն. ԱՄՆ դոլարի ապրանք, որը 2017 թւականի համեմատ աւելի է 3 անգամ, իսկ 2021 թւականի համեմատ աւելի է 20 տոկոսով. Իրանից Հայաստան են ներկրւում հիմնականում բնական գազ, շինանիւթ, երկաթեղէն, կաթնամթերք, չոր եւ թարմ մրգեր, լոլիկ եւ այլն: 2022 թւականին Հայաստանից արտահանումը Իրան կազմել է 102,3 մլն. ԱՄՆ դոլար, որը 2021 թւականի համեմատ աւելի է 56,1 տոկոսով. Հայաստանից Իրան արտահանւում են հիմնականում էլեկտրաէներգիա, մետաղի ջարդոն, սիգարետ, տաւարի միս, գառ եւ այլն:*

*Այսինքն՝ կարելի արձանագրել, որ իրանական ապրանքների արտահանման աճի տեմպը աւելի մեծ է, քան հայկականը:*

*Անշուշտ, իրանական ապրանքների արտահանմանը էապէս նպաստել է Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ, որի անդամ է նաեւ Հայաստանը եւ միակը, որն ունի ցամաքային կապ Իրանի հետ) եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան միջեւ կնքւած ժամանակաւոր ազատ առեւտրի համաձայնագիրը, որի շնորհիւ իրանական 306 ապրանքներ զրոյական մաքսատուրքերով կարող են արտահանւել Հայաստան, Ռուսաստան, Բելոռուսիա, Ղազախստան եւ Կիրգիզստան: Նախատեսւում է, որ 2024 թւականին Իրանի հետ ազատ առեւտրի համաձայնագիրը կը դառնայ մշտական:*

*Միաժամանակ ազատ առեւտրի մշտական համաձայնագիրը եւ երկու երկրներում հիւպատոսութիւնների բացումը կը նպաստեն կօօպերացիոն կապերի զարգացմանը, մասնաւորապէս՝ վերջին տարիների ընթացքում իրանական լոլիկը, կաթնամթերքը Հայաստանում վերամշակւում են եւ արտահանւում ԵԱՏՄ եւ այլ եւրոպական երկրներ: Տեղին է նշել, որ Հայաստանը ազատ առեւտի համաձայնագրեր ունի նաեւ Եւրոմիութեան, ԱՄՆ-ի, Ճապոնիայի եւ այլ երկրների հետ, այսինքն՝ Հայաստանում վերամշակւած ապրանքները կարող են արտահանւել այն երկրներ, որոնք փակել կամ սահմանափակել են իրանական ապրանքների ներկրումը:*

*Անշուշտ, Թաւրիզում Հայաստանի հիւպատոսութիւնը կարող է սպասարկել նաեւ իրանցի եւ հայ զբօսաշրջիկների այցերը՝ նրանց ապահովելով տեղեկատւութեամբ եւ այլ հիւպատոսական այլ ծառայութիւններով: Ամէն տարի աւելի քան 200 հազար իրանցիներ իրենց հանգիստ են կազմակերպում Հայաստանում, միաժամանակ Իրանը, մասնաւորապէս՝ Թաւրիզ կարող է հանդիսանալ հայ զբօսաշրջիկների նախընտրելի ուղղութիւնների մէկը՝ հաշւի առնելով հայ-իրանական պատմական եւ հարուստ ժառանգութեան առկայութիւնը. սա նոր խթան կը դառնայ երկու երկրների միջեւ զբօսաշրջային ենթակառուցւածքների զարգացման համար:*

*Իրանահայութեան կողմից իրականացւող ակտիւ եւ արդիւնաւէտ ծրագրերին զուգահեռ ներկայում պէտք է քայլեր իրականացնել Հայաստանի եւ Իրանի միջեւ կրթական, մշակութային կապերի զարգացման ուղղութեամբ, մասնաւորապէս՝ հիւպատոսարանները պէտք է իրենց շուրջ համախմբեն մտաւորականութեանը, ուսուցիչներին, դասախօսներին, ուսանողներին եւ աշակերտներին, կազմակերպեն փոխադարձ այցեր եւ համատեղ ծրագրեր իրականացնել, ինչը թոյլ կը տայ ոչ թէ որպէս զբօսաշրջիկ, այլ գործնական շփւել միմեանց հետ:*

*Ամփոփելով՝ պէտք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան միջեւ քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ դիւանագիտական յարաբերութիւնների խորացումը ուղղւած չէ երրորդ երկրների դէմ, այդ յարաբերութիւնները հիմնւած են արժանապատւութեան, իմաստութեան եւ փոխշահաւէտութեան սկզբունքների վրայ: Հայ-իրանական համատեղ ծրագրերի արդիւնքներից կարող են օգտւել ոչ միայն տարածաշրջանի, նաեւ այլ երկրները:*

**ՍՈՒՐԷՆ ՊԱՐՍԵԱՆ**
**Տնտեսագիտութեան թեկնածու, դոցենտ**
**Arfd.am**

# Խաղաղութի՞ւն... Այդ փաստաթղթում խաղաղութիւն չկայ



*Յունուարի 11-ին «Հրապարակ TV»-ի «Հինգշաբթի» հաղորդաշարի հիւրն էր ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ պատգամաւոր Գառնիկ Դանիէլեանը: Հաղորդման ընթացքում անդրադարձ է կատարւել ինչպէս յետպատերազմեան առաջին շրջանից մնացած, այնպէս էլ օրացոյցային նոր տարւայ սկզբից մեծ արագութեամբ ի յայտ եկած խնդիրներին, որոնց լուծումներն ու կարգաւորումները, ըստ պատգամաւորի, ընդդիմութիւնն ունի, առաջարկում է, սակայն ՀՀ «ինքնասիրահարւած» իշխանութիւններն ականջալուր չեն ընդդիմութեան խօսքին:*

*Գառնիկ Դանիէլեանն ի մասնաւորի խօսել է նաեւ Երեւանի կենտրոնը բեռնաթափելու ուղղութեամբ իշխանութիւնների ձեռնարկած թերի եւ ոչ նպատակայարմար քայլերի մասին, նշել, որ դրանք արդիւնաւէտ չեն եւ խորքում այլ նպատակներ են հետապնդում: Գոյքահարկի աննախադէպ եւ շարունակական թանկացումներն, օրինակ, ըստ պատգամաւորի՝ պատճառ կը դառնան, որ Երեւանի կենտրոնն աստիճանաբար «մաքրւի» ոչ ունեւոր խաւից: Գրեթէ նոյնն է կատարւում նաեւ այսպէս կոչւած «կարմիր գծերով» աւտոկանգառների պարագայում: «Այնպէս չէ, որ վճարը տարեկան 160 հազար դրամ բարձրացնելուց յետոյ «կարմիր գծերում» դատարկ տեղեր են յայտնւել: Դրանք այսօր էլ լիքն են, պարզապէս այլ մեքենաներ են կայանած: Նոյնիսկ պետական ծառայողներ կան, որոնք աւտոմեքենայով քաղաքի կենտրոն չեն իջնում, պատճառաբանելով, որ չեն կարող իրենց մէկ ամսւայ աշխատավարձը տալ կայանատեղիին»,- ասել է Գառնիկ Դանիէլեանը:*

*Գառնիկ Դանիէլեանն անդրադարձել է նաեւ իշխանութիւնների կողմից անընդհատ թմբկահարւող հայ-ադրբեջանական «Խաղաղութեան պայմանագրին» եւ նշել, որ այդ փաստաթղթում ըստ էութեան, խաղաղութիւն չկայ եւ այն նման է գեղեցիկ փաթեթաւորւած անորակ կոնֆետի: Հնարաւո՞ր են, արդեօք նոր արտահերթ ընտրութիւններ՝ իշխանութիւնների վերջին պոպուլիստական քայլերի եւ ընդդիմադիր պատգամաւորների՝ յաճախացած մարզային այցերի ֆոնին. պատասխանելով այս հարցին՝ Գառնիկ Դանիէլեանն ընդգծեց, որ ընդդիմադիր պատգամաւորների մարզային այցերը նոր երեւոյթ չեն, դրանք շարունակական պրոցես են, որ անկախ որեւէ իրավիճակից շարունակւելու է: «Իսկ ինչ վերաբերում է իշխանութիւնների վերջին շրջանի պոպուլիստական պահւածքին, ապա, իմ կարծիքով, դա սովորական մանիպուլիացիա է՝ նոր ձախողումների հետ կապւած հասարակական խիստ արձագանքը մեղմացնելու նպատակով»,- ասել է պատգամաւորը:*

# Սուրբ Ծննդեան տօների առիթով՝ Թեհրանի ոստիկանապետի այցը՝ ազգ. առաջնորդարան լուսանկարներով



*«ԱԼԻՔ» - Երեքշաբթի, յունուարի 9-ի առաւօտեան, մայրաքաղաքի Ոստիկանութեան եւ իրաւապահ ուժերի հրամանատար գեներալ Աբբաս Ալի Մոհամմադեանը, Թեհրանի տարբեր շրջանների հրամկազմի հետ միասին, այցելեց ազգային առաջնորդարան եւ հանդիպեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի, Թեմական խորհրդի եւ Պատգամաւորական ժողովի ատենապետերի հետ՝ շնորհաւորելով Նոր տարուայ եւ Սուրբ Ծննդեան տօների կապակցութեամբ:*

















# Հայ Աւետարանական եկեղեցու հոգեւոր հովիւը այցելեց Սրբազան Հօրը



*Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակից տեղեկանում ենք, որ չորեքշաբթի, յունուարի 3-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Սեպուհ արք. Սարգսեանին այցելել էր Հայ Աւետարանական եկեղեցու հոգեւոր հովիւ՝ Վերապատուելի դոկտ Միշէլ Աղամալեանը, ում ընկերակցում էր Վեր. Սերգէյ Շահվերդեանը:*

*Այցելուները եկել էին Սրբազան Հօրը շուտափոյթ ապաքինման մաղթանքներ փոխանցելու եւ միաժամանակ շնորհաւորելու Նոր տարուայ եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով:*

*Սրբազան Հայրը ջերմօրէն ողջունել ու գնահատել է նրանց ազնիւ վերաբերմունքը եւ յոյս յայտնել, որ Նոր տարին լինի խաղաղութեան եւ համերաշխութեան տարի՝ համայն աշխարհում:*

# Թեհրանի 12-րդ շրջանի քաղաքապետի այցը՝ Ս. Աստուածածին եկեղեցի եւ շրջափակում գտնուող կենտրոններ









*Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով՝ երեքշաբթի յունուարի 2-ին, Թեհրանի Ս. Աստուածածին եկեղեցի այցելեց Թեհրանի 12-րդ շրջանի քաղաքապետ Վահիդռեզա Անսառաքի Մոհամմադին եւ նրան ընկերակցող պատուիրակութիւնը:*

*Հիւրերին դիմաւորեցին Թեմական խորհրդի անդամ՝ Հայկազ Շիրւանեանը, Տ. Յակոբ քհնյ. Քէշիշեանը, եկեղեցու Եկեղեցական խորհրդի ներկայացուցիչները, «Արտակ Մանուկեան» թանգարանի վարիչ՝ Ալիս Շահնուրաղեանը եւ «Ակունք» կենտրոնի տնօրէն՝ Վանուշ Թեւանեանը:*

*Հիւրերը նախ այցելեցին եկեղեցի եւ եկեղեցու տարածքը, նաեւ ներկայ գտնուեցին «Ա. Մանուկեան» թանգարանում, որտեղ թանգարանի տնօրէնի կողմից համապարփակ բացատրութիւն տրուեց իրանահայ համայնքի մասին:*

*Հանդիպման ընթացքում շրջանի քաղաքապետը նշելով Իսլամ եւ Քրիստոնեայ կրօնների միջեւ առկայ ընդհանրութիւններին, յայտնեց, որ*

**(Շար. 6-րդ էջում)**

ՅԻՇԱՏԱԿ

# Արտուշ Աւանէսեանի յիշատակին

## (Մահուան 40-օրակի առթիւ)



*Ազգային-հասարակական գործիչ եւ «Ասպետ»-ի շքանշանակիր Արտուշ Աւանէսեանը ծնուել էր 1930 թուականին՝ Թաւրիզում, նախնական ուսումը ստացել էր տեղում, իսկ 1946 թուականին ընտանիքով տեղափոխուելով Ղազուին այնտեղ շարունակում է իր ուսումը:*

*Արտուշ Աւանէսեանը 1953 թուականին ընտանիքով տեղափոխւում է Ռաշտ քաղաք:*

*Նա կեանքի ընկեր է ընտրում Իշխանուհի Սահակեանին, ով նոյնպէս տարիներ շարունակ ազգանուէր աշխատանք է տարել Ռաշտի հայոց դպրոցում եւ աշխատել իբրեւ տեսուչ: Ունի երկու զաւակ՝ Հայդուկ եւ Սեւադա:*

*Արտուշ Աւանէսեանը, 1949 թուականին 19 տարեկանում բարեբար դոկտ. Արսէն Մինասեանի խորհրդով անդամագրւում է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը եւ Ռաշտ տեղափոխուելուց յետոյ անցնում է կուսակցութեան աշխատանքներին:*

*Յիշատակենք, որ Ռաշտի քաղաքական-հասարակական վայրիվերումների մի ժամանակաշրջանում, երբ կոմունիստական քարոզչութիւնը մոլորեցնում էր մեր երիտասարդներին, նա մի շարք ընկերների հետ կազմակերպում եւ իր գործուն մասնակցութիւնն է բերում մեր ազգային գաղափարաբանութեան տարածման գործում:*

*Նա աւելի քան 54 տարի ապրելով Ռաշտ քաղաքում անդամակցել է Եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեանը, եւ տարիներ շարունակ եղել է այդ կառոյցի նախագահը,նաեւ մի քանի շրջան Ռաշտի հայ համայնքի կողմից ընտրուել է Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի պատգամաւոր:*

*Արտուշ Աւանէսեանը վերջին տարիներին հաստատուել էր Թեհրանում եւ մինչ այն պահը, որ իր առողջական վիճակը թոյլ էր տալիս կարգապահ կերպով մասնակցում էր ազգային աշխատանքներին:*

*Արտուշ Աւանէսեանը իր ազգանուէր ծառայութիւնների շնորհիւ 2012 թուականին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի ձեռամբ առժանացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ «Ասպետի» շքանշանին:*

*Արտուշ Աւանէսեանը 2023 թականի նոյեմբերի 25-ին շատ կարճատեւ հիւանդութիւնից յետոյ իր մահկանացուն է կնքում, մեծ վիշտ պատճառելով իր հարազատներին եւ ընկերներին:*

*Հողը թեթեւ լինի վրադ:*

*Ընկերներդ միշտ կը յիշեն քեզ սիրելի ընկեր:*

**Մի ընկեր**

# ՀՕՄ-ի «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանի Ամանորի ծրագիրը՝ Թաւրիզում









***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-*** *Յունուարի 11-ին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի եւ Թեմական խորհրդի, Հայ Օգնութեան միութեան կենտրոնատեղիի հաւաքավայրում տեղի ունեցաւ «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանի Ամանորի մանկական հանդէսը:*

*Սրբազան Հօր կողքին հանդիսութեանը ներկայ էին՝ Պատգամաւորական ժողովի եւ Թեմական խորհրդի անդամներ, ՀՕՄ-ի վարչութեան անդամներ, ծնողներ եւ մշակութասէր թաւրիզահայեր:*

*ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի ատենապետուհի Անահիտ Յովսէփեանը բացման խօսքը ընթերցելով, Նոր տարուայ առիթով միութեան անունից համայնքին շնորհաւորանք յայտնեց: Նա իր խօսքը այսպէս սկսեց. «Արի՛, Նոր տարի, զալուստդ բարի, բայց այնպէս արի, որ ձիւնը ճերմակ, սրբելով տանի ոչ միայն կեղտը յոգնած մայթերի, այլ նաեւ փոշին ու մուրը հոգու: Թող այս տարի հրաշքներով լի տարի լինի. ժպիտ, ծիծաղ, խինդ, բերկրանք, յաղթանակ ու ջերմութիւն բոլորին: Գալիք յաջողութիւնը մեզ ուղեկցի ամբողջ տարում ու ողջ կեանքում: Ամէն օր լինի Ամանոր մեր կեանքում: Նոր յոյսերի ու երազանքների տարի լինի»:*

*Երեխաների կողքին էին ուսուցչուհիներ՝ Նայիրի եւ Անի Դիլանեանները, որոնք անցած մի քանի ամիսների ընթացքում երեխաների հետ պարապել էին սոյն ծրագիրը պատրաստելու համար: Օրուայ հանդիսավարներն էին՝ Վարդան Գասպարեանը եւ Վանէ Բահադորեանը, ովքեր Նոր տարուայ շնորհաւորական խօսքերով ու ասոյթներով, հերթաբար հրաւիրեցին երեխաներին, որպէսզի ելոյթ ունենան բեմում:*

*Երեխաները մեներգերով, խմբերգերով եւ արտասանութիւններով դիմաւորեցին Նոր տարին, նւագակցութեամբ երգի եւ երաժշտութեան ուսուցիչ Կարէն Սարգսեանի: Մանկավարժական համբերատար աշխատանքով իրագործուած սոյն ծրագրի վերջին բաժնով ազգասիրական երգեր կատարեցին երեխաները, հայ ազգի ապագայի մեծ յոյս ներշնչելով,*

**(Շար. 6-րդ էջում)**

# Խրիմեան Հայրիկը եւ Ախթամար կղզին

**Կազմեց ՊԵՏՐՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԸ**



*19-րդ դարի երկրորդ կէսին, հայ ժողովուրդը բախտաւորուեց իր մեծ դէմքերից Մկրտիչ Խրիմեանով. նա ծնուել է 1820 թ.-ի ապրիլի 4-ին, Վան քաղաքում, եւ նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում:*

*Մկրտիչ Խրիմեանը մեծ երազանքներով եւ ներուժով անձնաւորութիւն էր: Նա մեր պատմութեան մէջ իրականացրեց հայագիտութեան կարեւոր մի կենտրոնի հաստատումը: Իր երազանքն էր՝ Վանայ լիճի Ախթամար կղզին վերածել Վենետիկի Ս. Ղազար կղզիի նման հայ մշակոյթի կարեւոր կենտրոնի, այնտեղ տպարան եւ դպրոց հիմնելով, բայց Ախթամարի միաբանութիւնը յամառօրէն մերժեց Խրիմեանին իր մէջ ընդունել...:[1]*

*Մկրտիչ Խրիմեանի փորձը Ախթամար կղզին, իր Ս. Խաչ եկեղեցիով եւ պատմաքաղաքական կարեւոր դերով վերածել հայ մշակոյթի կարեւոր կենտրոնի. չյաջողուեց, բայց նա շուտ յուսահատուողը չէր:*

*Շուտով Խրիմեանը ստացաւ Պոլսի Հայոց պատրիարք Յակոբոս Սերոբեանի կոնդակը, որով նա նշանակուեց Վարագավանքի վանահայր եւ ստացաւ վանքի կալուածների տնօրինութեան իրաւունքը, այսինքն պատրիարքի կոնդակը Վարագավանքը անկախ էր համարում Վանի հոգեւոր առաջնորդարանից, որը Խրիմեանին տուեց գործելու լրիւ ազատութիւն:*

*Այսպիսով, Վարագավանքը եղաւ Արեւմըտեան Հայաստանի Ս. Ղազարը: Վարագավանքը գտնուելով Վանին շատ մօտիկ, բայց եւ անջատուած բարձր Վարագայ լեռան վրայ, կղզիացած մի մենաստան էր, լեռնային մի կղզի. եւ շատ յարմար մի վայր Խրիմեանի համար, իրագործելու իր ազգօգուտ ու հայրենաշէն երազները...:*

**(Քաղուած՝ «ՊԱՏՄԱՔԱՂ» թիւ՝ 36-ից, Արեւելահայերէնի վերածուած)**

-----------------------------

*1) - Գ. Գիւզալեան, Խրիմեան Հայրիկ (Գաղափարներու Աշխարհ), էջ 30, 31:*



# Մարզպանական Հայաստան Թէոդորոս Ռշտունի «ՀՄՈՒՏ ՂԵԿԱՎԱՐԸ»



ԹԷՈԴՈՐՈՍ Ա ՌՇՏՈՒՆԻ
930 - 941

*Հայաստանի առաջին բաժանումը Սասանեանների եւ Բիւզանդացիների միջեւ տեղի ունեցաւ 387 թուականին: Հայ ժողովուրդը իր ուժերը հաւաքելով 252 տարի յետոյ, Թէոդորոս Ռշտունիի ղեկավարութեամբ յաջողեց վերամիաւորել Հայաստանի երկու մասերը: Այդ տեղի ունեցաւ ի հետեւանք Արաբական արշաւանքների եւ Սասանեան կայսրութեան 637 թուականի. Կադիսիեայի[1] ճակատամարտի մեծ պարտութիւնից միայն երկու տարի յետոյ՝ 639 թ.-ին:*

*Թէոդորոս Ռշտունին շարունակեց կառավարել Հայաստանը իր երկու մասերով՝ Արեւելեան (Սասանեան) եւ Արեւմտեան (Բիւզանդական), նրանց միացնելուց յետոյ՝ մայրաքաղաք ունենալով Դւինը, իսկ իր կենտրոնատեղին էր Վանայ լճի՝ Ախթամար կղզին:*

*Հմուտ ղեկավար-ի հեռատեսութեամբ Թէոդորոս Ռշտունին նկատեց, որ Արաբական խալիֆայութիւնը օրէցօր աւելի է հզօրանում, այդ երիտասարդ ուժը շատ կարճ ժամանակի ընթացքում՝ յաջողեց գրաւել ամբողջ Միջագետքը եւ Պարսկաստանը, ու կործանեց Սասանեան կայսրութիւնը, իսկ բիւզանդացիներից գրաւեց ամբողջ Սիրիան եւ Պաղեստինը: Այսպիսի հզօր մի ուժի դիմադրելը անկարելի նկատելով՝ Թէոդորոս Ռշտունին որոշեց բանակցութեան մէջ մըտնել արաբների հետ՝ Հայաստանը փրկելու համար նոր արշաւանքների բերած աւերումներից եւ աղէտներից:*

*Այս պատմական հանգրւանում (7-րդ դար) արաբները բաւարարւում էին հաշտութեան պայմանագրեր կնքել իրենց գրաւած տարածքների ժողովուրդների հետ. պայմանով, որ նրանք վճարէին իրենց պահանջած հարկերը: Թէոդորոս Ռշտունին դիւանագիտական հմտութեամբ՝ յաջողեցրեց արաբների հետ հաշտութեան մի պայմանագիր կընքել.- «Բիւզանդիայի հետ քաղաքական եւ դաւանական հարցերի շուրջ լարուած յարաբերութիւնների պայմաններում՝ Թէոդորոս Ռշտունին 652 թ.-ին Ասորիքի եւ Միջագետքի արաբական կուսակալ Մուավիայի հետ կնքեց ձեռնտու հաշտութեան պայմանագիր: Խալիֆայութեան գերիշխանութիւնը ճանաչելու պայմանով՝ Հայաստանը երեք տարով ազատուեց հարկավճարից, պահպանեց իր զօրքերը եւ ինքնուրոյնութիւնը կառավարման բոլոր հարցերում, արաբները պարտաւորուեցին զօրք չմտցնել հայկական հողեր».[2] Օգտուելու համար հայոց ռազմական ուժից՝ արաբները այս պայմանագրով Հայաստանին իրաւունք տուին ունենալու 15,000-ից բաղկացած հեծելազօրք. եւ աւելին՝ այդ հեծելազօրքի բոլոր ծախսերը յանձն էր առնում արաբական խալիֆայութիւնը:*

*Պատմութեան մէջ, այս հայ-արաբական առաջին պայմանագիրն էր: Արաբները համոզուեցին, որ Հայաստանը նուաճելու համար կարիք ունէին շատ աւելի երկար ժամանակի. եւ այս պատմական հանգրւանում բաւականացան Հայաստանը իրենց կողքին ունենալով...:*

**(Քաղուած՝ «ՊԱՏՄԱՔԱՂ» թիւ՝ 36-ից, Արեւելահայերէնի վերածուած)**

---

*1) (جنگ قادصیه)- «Ա.»:*

*2) «Հայոց Պատմութիւն-հիմնահարցեր», խմբ. Հր. Ռ. Սիմոնեան, ԵՊՀ, Զանգակ, Երեւան, 2000, էջ 46:*

# Յունաստանում 2700 տարուայ հնութիւն ունեցող տաճար է յայտնաբերուել՝ բազմաթիւ ընծաներով զոհասեղանով



*Յունաստանում հնագէտները յայտնաբերել են 2700 տարուայ վաղեմութեան տաճար, որը պարունակում էր պայտաձեւ զոհասեղան՝ լցուած ընծաներով, գրում է Live Science-ը:*

*Աղիւսից կառուցւած 30 մետր երկարութեամբ տաճարը գտնւում է Ամարիսիա Արտեմիսի տաճարի կողքին՝ սրբավայր՝ նւիրուած յունական աստուածուհի Արտեմիսին, որը հետազօտողները յայտնաբերել են 2017 թուականին Եւիա կղզում, ասւում է Յունաստանի Մշակոյթի նախարարութեան յայտարարութեան մէջ:*

*«Այս տաճարի առանձնայատկութիւններից մէկը դրա ներսում յայտնաբերուած կառոյցների զգալի քանակն է»,- գրել են հետազօտողները:*

*Այս կառոյցները ներառում էին մի քանի օջախներ, որոնք գտնըւում էին տաճարի նաւում, ներառեալ մոխիրով լցւած զոհասեղանը, որի վրայ դրուած էին ընծաներ՝ խեցեղէն, ծաղկամաններ, կորընթեան ալաբաստր, ոսկեայ եւ արծաթեայ զարդեր՝ զարդարուած մարջանով եւ սաթով, թալիսմաններ եւ բրոնզէ եւ երկաթէ կցամասեր: Զոհասեղանը պարունակում էր նաեւ մի քանի կտոր ածխացած ոսկոր:*

*Տաճարի տակ հնագէտները յայտնաբերել են մի քանի չոր քարէ պատեր մէկ այլ շինութիւնից, որը ժամանակին կանգնած էր այս վայրում, ինչպէս նաեւ մի քանի բրոնզէ արձանիկներ՝ ցլի եւ խոյի տեսքով: Տաճարի մօտ նրանք յայտնաբերել են նաեւ Ն. Ք. ութերորդ եւ իններորդ դարերի շէնքերի մնացորդներ, ինչպէս նաեւ ամրութիւնների համակարգ, որը թւագրւում է վաղ պղնձի դարաշրջանի ուշ շրջանով, այսինքն՝ մօտաւորապէս Ն. Ք. 4000-3500 թթ.:*

**News.am**

## ՀՕՄ-ի...

(Շար. 5-րդ էջից)

*իրենց յատուկ մանկական խանդավառութեամբ, ձայնի հաղորդավարութեամբ Սեւադա Սաֆարեանի:*

*Տարուայ ամենաշատ սպասուած մարդը՝ Ձմեռ պապը (Աոլէն Բաղալեան), իր աւանդական շորերով ու խրատներով ժամանեց սրահ, եւ բարի պատգամները փոխանցելով ներկայ հանդիսականներին, մեծերին ու փոքրերին ուրախացրեց, ընկերակցութեամբ Ձիւն անուշիկին (Էրեբունի Մարգարեան): Նոյն առիթով տեղի ունեցաւ վիճակախաղ: Բախտաւոր հանդիսացաւ Այիդա Բաղալեանը:*

*Սրբազան Հայրը, իր եզրափակիչ եւ օրհնութեան խօսքը արտասանեց, հայ մանուկի հայեցի դաստիարակութեան կարեւոր կրթարան ներկայացնելով ՀՕՄ-ը համայն հայութեան կեանքում: ՀՕՄ-ի առաքելութեանը ակնարկելով, Սրբազան Հայրը յիշեցրեց, որ մեր ազգի կեանքի ուրախ եւ տխուր պահերի ընկերակիցն է այն, հայ մանկան դաստիարակութիւնից սկսեալ մինչեւ գաղթականների եւ աղքատ ընտանիքների իրավիճակով զբաղուող:*

*Ի վերջոյ, Սրբազան Հայրը գնահատեց ՀՕՄ-ի Թաւրիզի կենտրոնի վարչութեանը եւ բոլոր անդամներին, յատկապէս «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչական կազմին եւ բոլոր նուիրեալներին, ովքեր ներկայ տնտեսական մեծ տագնապը առանց նկատի ունենալու, քաջաբար շարունակում են իրենց վստահուած ազգային առաքելութիւնը: Սրբազան Հայրը նաեւ այս առիթով քաղցրախօսութեամբ շեշտեց մի բարեբախտութիւն, որ մանկապարտէզում գործող ուսուցիչներին է յատուկ, ասելով որ նրանք երբեք չեն պառաւում: Նա ուժ ու կորով մաղթեց բոլորին:*

*Իր խօսքերի աւարտին, Սրբազան Հայրը նուէրներ բաժանեց երեխաներին, որոնք պատրաստուել էին Թաւրիզի եկեղեցիների կանանց Խնամակալ մարմնի ձեռամբ:*

## Թեհրանի...

(Շար. 5-րդ էջից)

*միաստւածութեան տարբեր հետեւորդները Իրանում երկար տարիներ միասին ապրել են խաղաղութեան եւ բարեկամութեան մէջ եւ ինչպէս անցեալում այսօր եւս բարեկամական կապերը դեռեւս ամուր են:*

*Տ. Յակոբ քհնյ. Քէշիշեանը նաեւ իր հերթին բարձր գնահատեց քաղաքապետի ներկայութիւնը եւ յայտնեց, որ նման այցելութիւնները բարի կամեցողութեան եւ համագործակցութեան խորհրդանիշ են, որն ընդմիշտ վայելել է իրանահայ համայնքը:*

*Հանդիպման աւարտին հիւրերը հիւրընկալուեցին եկեղեցու խորհրդի սրահում:*

**Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակ**

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ

**կիրակի, յունիսի 21-ին, 2024 թ.**

Թեհրանի մեր բոլոր եկեղեցիներում, յընթացս սուրբ եւ անմահ պատարագի հանդիսաւորապէս ընթերցուելու է

**Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հռչակագիրը՝ 2024 թուականը**

**«ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»**

**հռչակելու կապակցութեամբ:**

Հրաւիրում ենք մեր ժողովրդի զաւակներին մասնակցելու կիրակնօրեայ ս. պատարագին եւ հաղորդուելու օրուայ խորհրդով ու Հայրապետական պատգամով:

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Եսայի Աւետիսեանին, Անիին եւ Ալինային՝ ընտանեօք, Բենիկին, Հերոսին եւ Վահիկին՝ ընտանեօք եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ԱՐՓԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ (ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

**ՆՈՅԵՄԻԿ, ՎԱՐԴԱՆ, ՄԵՏԱՔՍԷ ԵՒ ՄԱԳԴԱ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՆԵՐ**


**ԱԼԻՔ**
*Օրաթերթ*

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

**آلیک**
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

**ALIK** ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



Computer AGMA

Համակարգչային ընկերութիւն

خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل

سخت افزار
نرم افزار
شبکه

Tel: 88849305 & 88842385

ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
**ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ**
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան



**آژانس مسافرتی**
**هفت ستاره آسمان آفتابی**

7 STARS



QeshmAir هواپیمایی قشم
IRAN AIRTOUR هواپیمایی ایران ایرتور
VARESH AIRLINES هواپیمایی وارش
Armenia airways

**خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :**

✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում

✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان

09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

7setaretours



## ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ

Մի հեղինակաւոր արդիւնաբերական ընկերութիւն կարիք ունի.

- Հաշւապահութեան մասնագէտ
- Քիմիայի մասնագէտ
- Քարտուղարի, որը ծանօթ լինի վարչական աշխատանքներին

## آگهی استخدام

یک شرکت معتبر تولیدی به افراد ذیل نیازمند است.

- کارشناس حسابداری
- کارشناس شیمی
- منشی جهت امور اداری

ارسال رزومه به واتس آپ: ۰۹۱۹۵۸۵۲۴۷۷



مسافربری بین المللی

www.didarseir.ir
Email:info@didarseir.ir



**دیدار سیر گیتی**
**DIDAR SEIR-E-GITY**
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարուայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

**دفتر مرکزی**
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

**نمایندگی نارمک**
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537
واتساپ 09366955599
اینستاگرام @Didarseiregity

**دفتر ایروان**
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237

Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով





**سفر دوستان قرن**
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY

QeshmAir هواپیمایی قشم

نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում
**երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝**
դէպի Հայաստան եւ վերադարձ

**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM

۸۸۵۱۴۰۵۰




## Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

*Շնորհակալ ենք, որ Դուք կաք:*

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԹԱԳՈՒՇ (ԽԱԹՈՒՆ) ՇԱՀԲԱԶԵԱՆԻ (ՅՈՎՍԷՓԵԱՆ)**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ ուրբաթ, յունուարի 12-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, յունուարի 16-ին, կէսօրուայ ժամը 12:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 11:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Հարաւային Մաջիդիէ, Երկրորդ 16-մետրանոց (Աննա Աշարի) պող., հայոց ազգ. «Արարատ» դպրոցի դիմաց:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Րաֆֆի» համալիրի սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Երուանդ Յովսէփեան՝ ամուսինը:

Ցամիկ, Ժորժիկ, Գէնիկ եւ Փինիկ Առաքելեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռները:

Էլին եւ Ցովիկ Տէր-Պօղոսեանցներ՝ դուստրը եւ փեսան:

Թաղէ Ցովսէփեան՝ որդին:

Ցովսէփեան եւ Շահբազեան ընտանիքներ՝ հարազատները:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
Թեհրան - Երեւան - Թեհրան
هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
هواپیمایی قشم QeshmAir
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
agency@sati-co.com ۹ -۸۸۵۴۱۲۹۸ و ۵-۸۸۵۴۱۲۴۲-۰۲۱
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

# Իրանի իրաւապահ մարմինների յաջողութիւնները ահաբեկիչներին չէզոքացնելու գործում



«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական Հանրապետութեան իրաւապահ ուժերի կողմից ահաբեկչութեան դէմ լայնածաւալ գործողութեան արդիւնքում, ձերբակալուել են Ռասկի ոստիկանական կենտրոնի վրայ յարձակման միջամուխ, հիմնական չորս ահաբեկիչները:

«Թասնիմ» լրատուական գործակալութեան համաձայն՝ գործողութեան ընթացքում 4 ահաբեկիչները ձերբակալուել են, իսկ յանցագործներից առգրաւուել է մի շարք զէնք, զինամթերք ու տեխնիկա:

Դեկտեմբերի 14-ին Ռասկ քաղաքի ոստիկանական բաժանմունքի վրայ «Ջէյշ-օլ-Զոլմ»-ի ահաբեկիչների յարձակման հետեւանքով՝ նահատակուեցին Իրանի Իսլամական Հանրապետութեան ոստիկանութեան հրամանատարութեան անձնակազմի 11 անդամներ:

Մէկ այլ լուրի համաձայն՝ Սիստան եւ Բալուչեստան նահանգի անվտանգութեան ու կարգապահական ուժերի հարցերով տեղակալ՝ Ալիռեզա Մարհեմաթիի հաւաստմամբ, երկու ահաբեկիչներ, որոնք մտադիր էին մահապարտական գործողութիւն իրականացնել, որեւէ ակտից առաջ սպանուել են Սարաւան քաղաքում:

Անվտանգութեան ուժերի խօսնակի համաձայն՝ յիշեալ երկուսը, ովքեր երէկ՝ երեկոյեան ծրագրում էին մահապարտական ակտ իրականացնել, հետապնդուել են Սիստան եւ Բալուչեստան նահանգի ոստիկանական հրամանատարութեան ուժերի կողմից, եւ որեւէ գործողութիւնից առաջ, իրենց մօտ առկայ պայթուցիկ նիւթերի պատճառով եւ ոստիկանների կրակոցների հետեւանքով պայթել են պայթուցիկները եւ սպանուել են ահաբեկիչները:

Ֆուտբոլի Ասիայի գաւաթ.

## Վստահ յաղթանակ՝ առաջին քայլում

### Իրան-Պաղեստին՝ 4:1

«ԱԼԻՔ» - Հակառակ երկրորդ օրուան, ֆուտբոլի Ասիայի գաւաթի երրորդ օրն աչքի ընկաւ գոլերի առատութեամբ: Կայացած երեք հանդիպումներում խփուեց 15 գնդակ:

Օրուայ առաջին հանդիպումը կայացաւ D խմբում: Ճապոնիան ուժերը չափեց Վիետնամի ընտրանու հետ: Այս խաղը կարող էր դառնալ մրցաշարի առաջին սենսացիան, եթէ, իհարկէ, վիետնամցիներին յաջողուէր պահպանել յաղթական՝ 1:2 հաշիւը: Սենսացիան, այդպէս էլ չստացուեց: Ճապոնացիները յաղթեցին 4:2 հաշւով:

Յաջորդ երկու հանդիպումները կայացան C խմբում: Առաջին խաղում ԱՄԷ-ի հաւաքականը լուրջ խնդիրներ չունեցաւ Հոնկոնգի դէմ: Վերջնահաշիւը 3:1 էր յօգուտ ԱՄԷ-ի:

Իսկ օրուայ վերջին խաղում Իրանի հաւաքականը ուժերը չափեց Պաղեստինի հետ: Մրցաշարի մեկնարկը մեր ընտրանու համար փայլուն ստացուեց: Գրանցւեց 4:1 հաշւով վստահ յաղթանակ:

Իրանի կազմում գոլերի հեղինակ դարձան Քարիմ




Անսարիֆարդը (2-րդ րոպէ), Շջա Խալիլզադէն (12-րդ րոպէ), Մեհդի Ղաէդին (38-րդ րոպէ) եւ Սարդար Ազմունը (55-րդ րոպէ): Պաղեստինցիների միակ գնդակը խփեց Թամեր Սէյամը (45+6-րդ րոպէ):

Այսօր կը կայանայ եւս երեք հանդիպում, D խմբում մրցադաշտ դուրս կը գան Իրաքի եւ Ինդոնեզիայի հաւաքականները, իսկ E խմբում Հարաւային Կորէա-Բահրէյն, Մալայզիա-Յորդանան:

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

## Արամ Ա....

(Շար. 1-ին էջից)

ո՛չ հեռու մնացողները եւ ո՛չ ալ անոնց հեռու մնալուն պատճառ հանդիսացած կառոյցները կամ պատասխանատուները: Կուզենք բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թէ աւելի քան երբեք հրամայական է, որ զանազան պատճառներով հայ կեանքէն հեռու գտնուող մեր մարդուժը մօտենայ հայ կեանքին, մասնակից դառնայ մեր հաւաքական ապրումներուն, մաքառումներուն, ծրագիրներուն ու աշխատանքներուն: Այս հաստատ կամեցողութիւնը ու գիտակից յանձնառութիւնը կը սպասենք հեռու մնացողներէն: Միաժամանակ՝ կը սպասենք, որ պատասխանատու մարմիններ լայն կարելիութիւններ ստեղծեն մեր մարդուժին ու յատկապէս երիտասարդ ուժերուն, զանոնք զրաւելով մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն ներս»,-ըսած է Նորին Սրբութիւնը:

Իր Հայրապետական Հռչակագիրին մէջ, Վեհափառ Հայրապետը թուած է այն կառոյցները ու միջոցները, որոնք կարեւոր նպաստ կրնան բերել մարդուժի պատրաստութեան առաքելութեան.- ա) ընտանիքը, բ) եկեղեցին, գ) մեր Ս. Աթոռին դպրեվանքը, դ) հայ դպրոցը, ե) բոլոր կառոյցները, զ) հայագիտական կենտրոնները, է) Կաթողիկոսարանի մանկավարժական կենտրոնը եւ ը) համալսարանական ուսումը: Ինքնուսումը եւս կարելիութիւն կու տայ եւ իր կարեւոր ներդրումը կրնայ ունենալ մարդու կազմաւորման:

Հռչակագրի աւարտին, Արամ Ա կաթողիկոս կատարած է իր Հայրապետական գործնական թելադրութիւնները, տուած է ցուցմունքներ եւ վստահեցուցած է, որ «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը միշտ պատրաստ է զօրակից ու գործնապէս մասնակից դառնալու մարդուժի պատրաստութեան նուիրական առաքելութեան»:

Ստորեւ կը ներկայացնենք 2003 թուականէն մինչեւ օրս Վեհափառ Հայրապետին կողմէ կատարուած տարեկան հռչակումներու ցանկը.-

2003-Աստուածաշունչի տարի
2004-Հայ ընտանիքի տարի
2005-Ազգային պահանջատիրութեան տարի
2006-Հայ դպրոցի տարի
2007-Հայ լեզուի տարի
2008-Քրիստոնէական դաստիարակութեան տարի
2009-Երիտասարդութեան տարի
2010-Հայ կնոջ տարի
2011-Հայ մանուկի տարի
2012-Հայ գիրքի տարի
2013-Հայ մօր տարի
2014-Տարեցներու տարի
2015-100-ամեակ Հայոց Ցեղասպանութեան
2016-Ծառայութեան տարի
2017-Վերանորոգման տարի
2018-100-ամեակ Հայաստանի Առաջին Հանրապետութեան
2019-Հայ մամուլի տարի
2020-Յատուկ խնամքի կարօտ հայորդիներու տարի
2021-Արցախի տարի
2022-Սփիւռքի տարի (Ա)
2023-Սփիւռքի տարի (Բ) ինքնաքննութենէ երակազմակերպում
2024 - Մարդուժի պատրաստութեան տարի»,- ասուած է հրապարակուած հաղորդագրութիւնում:

املاک هنرمندان
تاسیس ۱۳۸۸ املاک هنرمندان بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران منطقه ۶
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388